

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N^o 24/08**

Քաղ. Երևան

29 հուլիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ տեքստում՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Յ.Աղամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, անդամ և քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն N63/8) քննարկեց «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» սինգապուրյան ընկերության (ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար Չ.Մանուկյան, լիազորագիրը տրված է 2008թ հունիսի 5-ին) 13.06.2008թ բողոքը «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցման որոշման դեմ:

Գործի նախապատմությունը՝

Հայաստանի Հանրապետությունում «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության անվամբ 2005թ հոկտեմբերի 17-ին գրանցվել է «GOLDEN EAGLE» բառային ապրանքային նշանը 30.04.2003թ-ի առաջնությամբ ԱԾՄԴ (ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման) 30-րդ դասի «սուրճ, սուրճի փոխարինիչներ. սուրճի բուսական փոխարինիչներ, սրճային ըմպելիքներ, սրճա-կաթնային ըմպելիքներ.» ապրանքների համար, հայտը ներկայացվել է ընկերության կողմից լիազորված (լիազորագիրը տրված է 25.04.2003թ, ստորագրված Մայսոր Նագարաջա Կարտիկի կողմից) արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյանի կողմից:

2008թ մայիսի 15-ին արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանը «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության անունից (լիազորագիրը տրված է 18.11.2005թ, ստորագրված Ա.Վ.Սարգանի կողմից) գրանցման է ներկայացրել զիջման պայմանագիր, համաձայն որի գրանցման թիվ 9935 «GOLDEN EAGLE» բառային ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությունը զիջում է «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը: 2008թ մայիսի 29-ին գրանցվել է զիջման պայմանագիրը (գրանցման թիվ 779):

Բողոքարկողի փաստարկները՝

2006 թվականին Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ֆիրմայի մտավոր սեփականությունը հանդիսացող մի շարք նշանների զիջում է ինդոնեզիական Նա. Ռուսաստանում: Չիջումը գրանցվել է ՌԴ Մտավոր և Արդյունաբերական Սեփականության Ֆեդերալ Գործակալության կողմից: Սակայն, ինչպես պարզվել է, դեռ 2005թ. սեպտեմբերի 15-ին զիջման պայմանագիրը ստորագրող անձը, այն է՝ պարոն Ա.Սարգանը չի ունեցել նման պայմանագիր ստորագրելու ընկերության կողմից իրեն տրված որևէ իրավասություն: Բանն այն է, որ համաձայն ընկերության ներքին քաղաքականության և

կանոնադրության, մտավոր սեփականությանը վերաբերող բոլոր պայմանագրերը պետք է պարտադիր նոտարով հաստատված և վավերացված լինեն: Կանոնադրության խախտմամբ կատարված նշանների զիջումը հիմք է հանդիսացել դատական գործի հարուցման, որի արդյունքում Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանը որոշում է կայացրել չեղյալ ճանաչել զիջման պայմանագրերի գրանցումը: Կանոնադրության խախտմամբ կատարված նշանների զիջումը հիմք է հանդիսացել դատական գործի հարուցման, որի արդյունքում Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանը որոշում է կայացրել չեղյալ ճանաչել զիջման պայմանագրերի գրանցումը:

Այդ որոշումը ընդունվել է սույն թվի ապրիլի 22-ին, սակայն մեկ ամիս չանցած մեկ այլ կեղծ զիջման պայմանագիր («կնքված» 19 նոյեմբերի 2005թ.) գարնցելու փորձ է արվել նաև ԱՊՅ այլ պետություններում:

Տեղեկացված լինելով դրա մասին սեփականատերը շտապ նամակ է ուղարկել համապատասխան գործակալություններ, նույն թվում Մտավոր Սեփականության Գործակալություն, որը ձեր տրամադրության տակ է, և որով ընկերությունը հայտարարել է, որ երբևէ մտադրություն չի ունեցել զիջելու իր մտավոր սեփականությունը հանդիսացող ապրանքային նշանների իրավունքները: Սակայն որոշ երկրներում, նույն թվում Չայնաստանում, պայմանագիրը արդեն գրանցված է եղել: Չաջողվել է կանխել միայն կեղծարարների կողմից նշանի կրկնօրինակը ստանալու փորձը, որը հաջողվելու դեպքում իրական սեփականատիրոջ ձեռքին եղած վկայագիրը փաստորեն անվավեր կճանաչվեր:

Այսօրվա օրով և զիջման պայմանագիրը ներկայացնելու պահին, պարոն Ա.Սարգսյանը այլևս չի հանդիսանում Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթ՝ գործադիր տնօրեններից մեկը, ինչի մասին վկայում է Ֆինանսական Չաշվառման և Կորպորատիվ Կարգավորող Մարմնի կողմից տրված մարտի 18-ի դրությամբ քաղվածքը: Այսինքն, խոսքը գնում է կեղծ փաստաթուղթ գրանցման ներկայացնելու մասին:

Ելնելով վերոհիշյալից բողոքարկողը խնդրել է չեղյալ ճանաչել Մտավոր Սեփականության Գործակալության գրանցամատյանների բաժնի կողմից նշանի զիջման պայմանագրի գրանցումը:

Բողոքարկողը բողոքարկման խորհուրդ է ներկայացրել հետևյալ փաստաթղթերը՝

1. Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի 22.04.2008թ որոշումը 15.09.2005թ «GOLDEN EAGLE» բառերը պարունակող մի շարք ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների զիջման պայմանագրերը չեղյալ ճանաչելու մասին: Ինչպես նաև նույն դատական գործի շրջանակներում հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին հայցվորի դիմումը մերժելու մասին Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի 27.07.2006թ որոշումը:

2. Քաղվածքի պատճեններ Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթ՝ ընկերության կանոնադրությունից, առ այն, որ ցանկացած փաստաթուղթ պետք է ստորագրվի ոչ միայն տնօրենի, այլև քարտուղարի, երկրորդ տնօրենի կամ հատուկ նշանակված երրերդ անձի կողմից, նշելով, որ խախտվել է նաև կանոնադրության այս կետը, ինչպես նաև տնօրենների իրավունքներին և պարտականություններին վերաբերող:

3. Սինգապուրի «Ընկերությունների մասին օրենքի» նոտարով վավերացված պատճենը:

4. 2005թ դեկտեմբերի 9-ի նամակը ուղղված Ա.Սարգսյանին, առ այն, որ զիջման պայմանագրերի կնքումը գտնվում են Ա.Սարգսյանի իրավասությունների ներքո, տնօրենի պաշտոնը ազատելու և այլնի վերաբերյալ:

5. Գրանցման N9935 ապրանքային նշանի N9935 վկայագրի պատճենը

«ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությունը (ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյան, լիազորագիրը տրված է 2008թ հունիսի 1-ին) ներկայացրել է գրավոր առարկություններ բողոքի դեմ հետևյալ բովանդակությամբ՝

15.05.2008թ «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերության կողմից դիմում է ներկայացվել գրանցման թիվ 9935 «GOLDEN EAGLE» բառային ապրանքային նշանի վերաբերյալ զիջման մասին պայմանագիրը գրանցելու համար, որը կնքվել է 18.11.2005թ ապրանքային նշանի սեփականատեր «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության տնօրեն Ա.Վ.Սարգսևի և «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերության տնօրեն Վ.Բ.Մարկովայի միջև:

2008թ մայիսի 29-ին ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ սույն որոշումում նաև օրենք) և «Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի գրանցման կարգի» (այսուհետ սույն որոշումում նաև կարգ) համաձայն, ուսումնասիրելով ներկայացված բոլոր փաստաթղթերը, օրենքի սահմաններում որոշում է կայացրել զիջման պայմանագիրը գրանցելու մասին:

Հայտնում եմ ձեզ, որ 2005թ-ին զիջման պայմանագիրը կնքելու պահին պարոն Սարգսևը հանդիսանում էր «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության տնօրեն (23.02.1999թ-09.12.2005թ): Ի հաստատումն ինչի ներկայացնում եմ համապատասխան փաստաթուղթը: Այսինքն՝ պարոն Սարգսևն իրավունք ուներ ստորագրելու սույն պայմանագիրը ընկերության կողմից:

2.Մանուկյանի կողմից որևէ փաստաթուղթ ներկայացված չէ, որով ապացուցվում է, որ «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության և «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերության միջև կնքված պայմանագիրը «կեղծ» է:

Այսպիսով 2.Մանուկյանի ներկայացրած կյութերն անհիմն են, քանի որ վերաբերում են ՌԴ-ում գրանցված 17 ապրանքային նշաններին, որոնք բողոքարկվում են Ռուսաստանի ք. Մոսկվայի արբիտրաժային դատարանում, որտեղ խոսքը գնում է զիջման պայմանագրի մասին՝ կնքված «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության և «Ռուստորգսերվիս» Բաց Բաժնետիրական Ընկերության միջև, և որը վերջնական լուծում չի ստացել, քանի որ դեռևս գտնվում է բողոքարկման փուլում: Այսինքն, խոսքը գնում է տարբեր պայմանագրերի մասին՝ կնքված տարբեր երկրների գործակալություններում:

Վկայագիրը, որը գտրվում է «Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությունում, արդեն անվավեր է ճանաչվում, քանի որ ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում գրանցվել է սույն զիջման պայմանագիրը, որի սեփականատերը հանդիսանում է «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությունը:

Ելնելով վերոնշյալից, առարկողը խնդրել է բողոքը թողնել առանց քննության և զիջման մասին 779 որոշումը թողնել ուժի մեջ:

Առարկողը բողոքարկման խորհուրդ է ներկայացրել հետևյալ փաստաթղթերը՝

1. Ա.Սարգսևի 2008թ հունիսի 11-ի նամակը ուղղված Սինգապուրի հաշվապահական հաշվառման և ընկերությունների կարգավորող մարմնին, առ այն, որ 2005թ ապրիլի 27-ի Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին ծանուցված չի եղել և իր բաժնետոմսերը որևէ մեկին որպես սեփականություն չի փոխանցել:

2. Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Բասմանի միջշրջանային դատախազության ավագ քննիչի 28.04.2007թ որոշում նախնական քննությունը կասեցնելու մասին: արբիտրաժային դատարանի 22.04.2008թ որոշումը 15.09.2005թ «GOLDEN EAGLE» բառերը պարունակող մի շարք ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների զիջման պայմանագրերը չեղյալ ճանաչելու մասին: Ինչպես նաև նույն դատական գործի շրջանակներում հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին հայցվորի դիմումը մերժելու մասին Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի 27.07.2006թ որոշումը:

3. Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Իններորդ Արբիտրաժային Վերաքննիչ Դատարանի 22.07.2008թ որոշումը՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Արբիտրաժային Դատարանի 22.04.2008թ որոշման դեմ վերաքննիչ բողոքի քննարկման նիստի ժամանակ նիստը հետաձգելու մասին հայտնած միջնորդությունը բավարարելու մասին որոշում

4 Տաշկիստանի Զանրապետությունում «GOLDEN EAGLE» բառերը պարունակող ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների զիջման պայմանագիրը գրանցելու մասին որոշման պատճենը:

5. Սուլվեյգա Բիեգայի գրությունը ուղղված Մարկովային, առ այն, որ հենց իր՝ Մարկովայի, հանձնարարությամբ ինքը 2008թ հունիսի 5-ին դիմում է ներկայացրել Լատվիայի Զանրապետությունում «GOLDEN EAGLE» բառերը պարունակող ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների զիջման պայմանագիրը գրանցելու համար:

Բացի կողմերի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված դիմումից և առարկություններից իրենց կից փաստաթղթերով, գործակալությունը՝ մինչև բողոքարկողի կողմից 13.06.2008թ բողոք ներկայացնելը, 11.06.2008թ «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերության տնօրեն Վ.Բ. Մարկովայի գրությունը, առ այն, որ գործակալությունը ստացել է Մայսոր Նազարաջա Կարտիկի կողմից գրություն, որում նա հայտնում է, որ պայմանագիրը ստորագրողների ստորագրությունը պետք է վավերացված լինի նոտարի կողմից, իսկ պայմանագրերը ենթակա են օրինականացման: Մարկովան, իր գրությունում, ներկայացրել է իր փաստարկները, ըստ էության, որ նման պահանջներ Սինգապուրի օրենսդրությամբ սահմանված չեն և որ Սարգանը վիճարկվող պայմանագիրը կնքելու իրավասություն ուներ և ընկերության կանոնադրության որևէ կետ չի խախտել: Մարկովան գրությանը կից ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

1. Քաղվածք Սինգապուրի Զանրապետության գրանցման մարմնից (ACRA), որում տրված են տեղեկություններ նրա մասին, որ 18.11.2005թ. Ա.Սարգանը հանդիսացել է ընկերության տնօրեն:

2. Ռուսաստանի Դաշնության Մոսկվա շրջանի Դաշնային արբիտրաժային դատարանի 07.03.2007թ երկու որոշումներ:

3. Սինգապուրի «Ընկերությունների մասին օրենքից» քաղվածքներ:

4. Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերության կանոնադրությունը:

Ինչպես նաև գործակալությունը 12.06.2008թ ստացել է Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերության 03.06.2008թ գրությունը ստորագրված Մայսոր Նազարաջա Կարտիկի կողմից, առ այն, որ ընկերությունը մտադրություն չունի զիջելու ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները երրորդ անձանց, ինչպես և չի կատարել նման զիջումներ: Նշել է նաև, որ ընկերության ներքին

քաղաքականության պայմանագրերում դրված ստորագրությունները պետք է վավերացվեն նոտարի կողմից, իսկ պայմանագիրը օրինականացված:

Գործակալությունը ստացել է նաև 18.06.2008թ Ռուսաստանի Դաշնությունում Սինգապուրի դեսպան Մայքլ Թայի նամակը և նույն նամակը ստացել է նաև 29.07.2008թ Յայաստանի Յանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա.Կիրակոսյանի 11/104999 գրույամբ, որում ասվում է, որ՝

Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերության տեղեկատվության հիման վրա, որոշ ռուսաստանյան ընկերություններ փորձում են անօրինաբար գրանցել «Գոլդն Իգլ» ապրանքային նշանը, որը լավ ծանոթ է Ռուսաստանի Դաշնությունում և ԱՊՅ երկրներում: Մասնավորապես, մեզ հայտնի է դարձել Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերությունից, որ «ՏՎՍ Թրեյդ» ԲԲԸ փորձում է գրանցել ապրանքային նշանը ձեր իրավասության տակ գտնվող տարածքում: Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերությունը մեզ տեղեկացրել է նաև, որ պարոն Ա.Սարգանը ոչ օրինական կերպով ստորագրություն է դրել Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերության անունից: Մենք ուզում ենք տեղեկացնել այն մասին, որ պարոն Ա.Սարգանը Սինգապուրում հանդիսանում է իրավունքներում չվերականգնված սևանկ: Ռուսաստանյան արքիտրաժային դատարանում Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերությունը բարեհաջող պաշտպանել է իր իրավունքները նման գործարքների դեմ, որոնք պարոն Սարգանը փորձել է իրականացնել «Ռուստորգսերվիս» ռուսաստանյան ընկերության միջոցով:

Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերությունը անհանգստացած է նրանով, որ «ՏՎՍ Թրեյդ» ԲԲԸ կամ նրանց հանձնարարությամբ այլ անձինք, կարող են փորձեն քայլեր կատարել ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի փոխանցման համար: Յաշվի առնելով դա, ես գրում եմ ձեզ, որպեսզի զգուշացնեմ նման անօրինական գործողությունների մասին, քանի որ Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ ընկերությունը հանդիսանում է տվյալ ապրանքային նշանների օրինական սեփականատերը և ոչ մի գործողություն չպետք է կատարվի տվյալ ապրանքային նշանների սեփականության իրավունքի փոփոխության ուղղությամբ:

Բողոքարկման խորհուրդի 2008թ. հուլիսի 29-ի նիստում կողմերի ներկայացուցիչները նաև բանավոր ներկայացրեցին իրենց կարծիքները Ա.Սարգանի կողմից նման պայմանագիր կնքելու իրավասու կամ ոչ իրավասու լինելու, ինչպես նաև պայմանագրի «կեղծ» կամ ոչ «կեղծ» լինելու վերաբերյալ:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը և առարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները բողոքարկման խորհուրդը պարզեց, որ «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՍ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը զիջելու մասին պայմանագրի «կեղծ» լինելու, «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության տնօրեն Ա.Սարգանի կողմից այն կնքելու իրավասու լինելու, ինչպես նաև այլ երկրների՝ տվյալ դեպքում Ռուսաստանի Դաշնության, դատական ակտերի Յայաստանի Յանրապետությունում կիրառելու հարցերի լուծումը բողոքարկման խորհրդի իրավասությունից դուրս են և համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և օրենքի

46-րդ հոդվածի «բ» ենթակետի ենթակա են դատական կարգով դատարանի կողմից լուծման: Յետևաբար այս հարցերը բողոքարկման խորհուրդը հանեց քննարկման շրջանակներից, չքննարկեց, և այն բոլոր ապացույցները, ինչպես նաև բանավոր տրված բացատրությունները, որոնք վերաբերում են այս հարցերին հանեց ապացույցների կազմից՝ քննարկվող հարցին չվերաբերելու պատճառով:

Օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է՝ «Ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ նրանց մի մասի համար, որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում: Ապրանքային նշանը զիջել չի թույլատրվում, եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ գցելու պատճառ դառնալ՝ ապրանքին կամ դրա արտադրողին վերաբերող հարցերում:», օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է՝ «Ապրանքային նշանի զիջման և լիցենզային պայմանագրերը գրանցվում են լիազոր մարմնում: Չգրանցված պայմանագիրը համարվում է անվավեր:», «Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի» (այսուհետ սույն որոշումում նաև՝ կարգ) 4-րդ կետի 1-ին պարբերությունը սահմանում է՝ «Ձիջման մասին պայմանագրի գրանցման դիմումում (Յավելված 1) պետք է նշվեն ապրանքային նշանի գրանցման վկայագրի (երի) համարը (ները), նշանի սեփականատիրոջ (այսուհետ՝ զիջող) և այն անձի (այսուհետ՝ ստացող) անունը, ազգանունը (անվանումը), բնակության կամ գտնվելու վայրի փոստային հասցեն (այսուհետ՝ նաև հասցե) և երկրի կոդը, ում զիջվում է ապրանքային նշանը:», իսկ 5-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները սահմանում են՝ «Սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումներն ստորագրում է ապրանքային նշանի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը: Վերջին դեպքում դիմումին կցվում է լիազորագիրը:

Իրավաբանական անձի կողմից ներկայացվող դիմումն ստորագրում է դրա ղեկավարը, որի ստորագրությունը վավերացվում է տվյալ իրավաբանական անձի կնիքով:

Արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացվող դիմումն ստորագրում է հավատարմատարը՝ նշելով անունը և ազգանունը:» Տվյալ դեպքում խախտվել են կարգի 4-րդ և 5-րդ կետերը, քանի որ համաձայն «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության 03.06.2008թ գրության ընկերությունը մտադրություն չի ունեցել զիջելու ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները երրորդ անձանց, ինչպես նաև նիստի ժամանակ Ա.Գալոյանը հայտնել էր, որ ինքը դիմում ներկայացնելու հանձնարարությունը ստացել է «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերության կողմից, որը կարգի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն նման իրավասություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության 13.06.2008թ բողոքը «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցման որոշման դեմ ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 27-րդ հոդվածի, կարգի 4-րդ և 5-րդ կետերի, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության 13.06.2008թ բողոքը և «Մասթր Բևրեջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՍ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը գիջելու մասին պայմանագրի գրանցման որոշումը անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան